

կրհր. վերակոչեցաւ ար. եկեղեցիս յանուն արքայն Գրիգորի մերոյ  
 Լուսաւորչին եւ միւս խորանն յանուն արքայն Յովնանեն Կարապե-  
 տին մինչեւ ցայսօր ժամանակի: Իսկ միւս ազգն անգիսացեալ կոչնն  
 զեկեղեցիս յանուն Հեղինեկ բազումնոյն, որ եւ է յոյժ անպասշաճ, զի  
 Հեղինեկն ինքն է շինող եկեղեցւոյս, եւ զիս՞րոյ կոչեաց է յանուն իւր  
 ի կենդանութեան զեկեղեցիս. որ յանենայնի խնուարհակերտ եւ աս-  
 տուածասուր էր. զի քաղաք եւ կամ գիւղ իցի՞ր՝ աւաստի էր կոչիչ  
 յանուն շինողին. իսկ զեկեղեցին որ տուն է Աստուծոյ զիսրոյ ժպրհի  
 ոք յիւր անունն մակագրել: Ուրեան չէ յանուն Հեղինեկին. այլ յա-  
 նուն արքոյ խաչին սկիզբն անուանակոչեալ, եւ այսս ի մեծ յանուն  
 շուստունն մերոյ լուսիբեցաւ սուրբ եկեղեցիս եւ է ի ձեռս մեր: Որ  
 եւ ի ՌՃԿԸ (= 1719) քուի՞ն՝ մերձ ասիսանիս զերկու կառարն որ  
 շքեայք էին հողով եւ բարացեալ էր աղբիւսն յառաստի կառարացն  
 մինչեւ ցայսակն՝ Աստուծով յսակեալ ի դուրս հանաք գնողն զանե-  
 նայն: Եւ յամի շինութեան արքոյ Յարութեան՝ զտեղին զայն լորոզեալ  
 կասաղումնիս (երկու փայտաշէն սենեակներ?) շինեցին յերկուց կող-  
 մանց, եւ կարողիկի զվեց շուստունն որ բնախն փակեալ էին քա-  
 ռիւ եւ ձեռնով՝ լոր քացաք, եւ երկաթիւ անրացուցաք ի փոստս արքոյ  
 խաչին Քրիստոսի: Եկեղեցւոյս երկայնութիւնն ԽԵ ոտք է, եւ շալու-  
 բիւն ԽԱ ոտք է:

Գոյ մերձ խորանին պատուան մի որ հայի ի յայր Խաչգիւտին,  
 ուր ասի թէ՛ ասս ևսուր դժխոյն Հեղինեկ եւ սայր պեղել գնողն որ էր  
 ի վերայ խաչափայտին Քրիստոսի: Յանեկե եկեղեցւոյ արքոյ Լուսաւոր-  
 չին մերոյ՝ գոյ ասիսան մի ժՍ. ոտք եւ է քառափոր կռածեալ. եւ  
 իջեալ այնու առ տեղի իւր կայր կենսաստ խաչն Քրիստոսի, ընտե-  
 կուց խաչերացն աւազակաց: . . . Ուսի ի վերին խնամոցն՝ դժխոյն  
 Հեղինեկ զտաւ զխաչն ամբնկալ. ձեռանք Յուդայի Կիրոյի»:

Հաննէի այս տողերը կը ցոլացնեն գլխաւոր երկու տեսակ  
 աւանդութիւններ, Գիւտփաչի և Ս. Լուսաւորչի. աւանդութեան  
 համաձայն Հեղինէի գտած խաչին տեղը Ս. Լուսաւորչի եկեղե-  
 ցիին ներքե է, ուր կ'երթուի սանդուխով մը և կ'երեւի որ եկե-  
 ղեցին ի սկզբան, ինչպէս կը գրէ Հաննէ, Ս. Խաչի անուան  
 նուիրուած էր և յետոյ է որ Ս. Լուսաւորչին նոյն տեղւոյն մէջ  
 հօթը տարի ճգնողութեան համար Հայք վերակոչած են զայն  
 Ս. Լուսաւորչի: Այս եկեղեցին կը վերաբերի Հայոց. ան կը յի-  
 շատակուի Սալահէտօինի Հայոց պատրիարքին տուած հրովար-